Arca քարտերի հետվճարային նախագծի
պայմաններ և դրույթներ

1. Նախագծի շրջանակում 2% հետվճար տրամադրվելու է Բանկի կողմից թողարկված Arca քարտերով վճարումներ իրականացրած քարտապաններին:

2. Հետվճարները շահառուներին վճարվելու են յուրաքանչյուր ամիս: Տվյալ ամսում վճարման ենթակա հետվճարը հաշվարկվում է այդ ամսվան նախորդող ամսում կատարած անկանխիկ գնումների և վճարումների գործարքների 2%-ի չափով և փոխանցվում է այն բանկային հաշիվներին, որոնցով կատարվել են հաշվարկված հետվճարի հիմք հանդիսացող անկանխիկ գնումների և վճարումների գործարքներից հաշվարկված հետվճարի հիմք հանդիսացող վերջին գործարքը:

3. Շահառուներին վճարվող հետվճարը տրամադրվելու է 1,000 ՀՀ դրամը գերազանցող յուրաքանչյուր գործարքի դիմաց, բացառությամբ այն գործարքների, որոնք չեն մասնակցում հետվճարի հաշվարկում և չեն հանդիսանում հետվճարի հիմք: Ընդ որում, յուրաքանչյուր մեկ գործարքի համար շահառուներին վճարվող հետվճարը չի կարող գերազանցել 6,000 ՀՀ դրամը: Շահառուներին վճարվող հետվճարը յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար չի կարող գերազանցել 60,000 ՀՀ դրամը: Տվյալ ամսում մեկ շահառուի կողմից միաժամանակ մեկից ավելի և տարբեր բանկերի կողմից թողարկված Arca վճարային քարտերով վճարելու դեպքում կուտակված հետվճարների վճարման ենթակա հանրագումարը յուրաքանչյուր ամսվա համար չի կարող գերազանցել 60,000 ՀՀ դրամը:

4. Նախագիծը մեկնարկել է 2026 թ. հունվարի 1-ից և գործելու է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

5. Հետվճար **չի ձևավորվելու** հետևյալ գործարքներից՝

- տեղեկատվության, կապի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներից,
- ՀՀ պետական բյուջե փոխանցվող վճարումներից,
- բարձր ռիսկային վաճառակետերում կատարված վճարումներից («Մեծահասակների համար նախատեսված բովանդակության», «Ծանոթությունների կայքերի և հարթակների», «Խաղատների և խաղային ծառայությունների», «Կրիպտո փոխանակման, կրիպտո դրամապանակների և այլ կրիպտո ծառայությունների», «Թվային ֆայլերի պահեստավորման և հեռակա օգտագործման ծառայությունների», «Ազարտային խաղերի», «Բարձր ռիսկային ֆինանսական առևտրային հարթակների», «Հեռախոսային մարքեթինգային ծառայությունների», «Ավտոմատ երկարաձգվող բաժանորդագրությունների», «Թանկարժեք մետաղների և քարերի առուվաճառք» սպասարկման կետերը, բացառությամբ՝ Դեղատների),
- ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող ծառայությունների դիմաց ֆինանսական հաստատության օգտին գանձվող վճարումներից,
- Arca նվեր և մեկանգամյա օգտագործման համար նախատեսված քարտերով կատարված վճարումներից:

6. Հետվճարը տրամադրվելու է նաև բոլոր այն կենսաթոշակառուներին և նպաստառուներին, ովքեր իրենց կենսաթոշակները և նպաստները ստանում են Arca վճարային քարտերով: